ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

««ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-217[7]-28.03.2022-ՏՀ-011/0) ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություն ներն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5	6
1.	ՀՀ կառավարություն	**«Օտարերկրացիների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված**	«Օտարերկրացիների մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածում առաջարկում ենք 5-րդ մասից առաջ դնել ««» կետադրական նշանը՝ նախատեսված լրացման ամբողջ տեքստը չակերտներում ներառելու նպատակով:	Ընդունվել է: Նախագծի 1-ին հոդվածում համապատասխան կետադրական նշանը լրացվել է:	
2.	ՀՀ կառավարություն	**«Օտարերկրացիների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված**	«Օտարերկրացիների մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածով «Օտարերկրացիների մասին» օրենքի 6-րդ հոդվածում լրացվող 7-րդ մասում կիրառվում է «Կառավարություն» ձեւակերպումը, իսկ «Օտարերկրացիների մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 3-րդ հոդվածով «Օտարերկրացիների մասին» օրենքի 10-րդ հոդվածի նոր խմբագրությամբ շարադրվող 4-րդ մասում՝ «Հայաստանի Հանրապետության կառավարություն» ձեւակերպումը: Ուստի առաջարկում ենք «Օտարերկրացիների մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծում միեւնույն միտքն արտահայտել միեւնույն բառերով՝ հաշվի առնելով «Օտարերկրացիների մասին» օրենքում կիրառվող ձեւակերպումը եւ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասը, այն է՝ «Նորմատիվ իրավական ակտում միեւնույն միտքն	Ընդունվել է: Նախագծի 1-ին հոդվածը խմբագրվել է՝ «Կառավարություն» բառը փոխարինելով «Հայաստանի Հանրապետության կառավարություն» բառերով:	

			արտահայտելիս կիրառվում են միեւնույն բառերը, տերմինները կամ բառակապակցությունները՝ որոշակի հերթականությամբ:»:		
3.	ՀՀ կառավարություն	**«Օտարերկրացիների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված**	«Օտարերկրացիների մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածով «Օտարերկրացիների մասին» օրենքի 6-րդ հոդվածում լրացվող 6-րդ մասի «ՀՀ» հապավումն առաջարկում ենք հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասը, այն է՝ «Օրենքի լրիվ անվանումը հիշատակելիս հետեւյալ հաջորդականությամբ ներառվում են օրենքի վերնագիրը, օրենքի ընդունման տարին, ամիսը (տառերով), ամսաթիվը, հերթական համարը եւ «օրենք» բառը: Օրենքի կրճատ անվանումը հիշատակելիս դրանում նշվում է օրենքի վերնագիրը:»:	Ընդունվել է: Նախագծի 1-ին հոդվածը խմբագրվել է:	